# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 95- Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 5-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 21-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար

ծառայության (այսուհետ՝ Փրկարար ծառայություն) կառուցվածքում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

1) Փրկարար ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող՝ Ծառայության կազմակերպման վարչությունը միացնել Փրկարար ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող Փրկարարական ուժերի վարչությանը.

2) Փրկարար ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ հանդիսացող Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության ու Քաղաքացիական պաշտպանության վարչության միաձուլմամբ ստեղծել Քաղաքացիական և բնակչության պաշտպանության վարչություն՝ որպես հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 5-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 25-րդ կետում՝

1) ուժը կորցրած ճանաչել 2-րդ, 4-րդ և 8-րդ ենթակետերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-րդ ենթակետ՝

«23) Քաղաքացիական և բնակչության պաշտպանության վարչությունը:»

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ, փրկարարական ծառայության գեներալ-մայոր Կամո Ցուցուլյանին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, կատարել համապատասխան փոփոխություններ **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության** փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «**Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության** փրկարար ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները

հաստատելու և փրկարար ծառայության տնօրենի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 15-Լ հրամանում:

***Ա. ՍԱՐԳՍՅԱՆ***

**24.12.2025**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ**
**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ**